# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
# «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ՝ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ մահապատժի վերացմանն ուղղված երկրորդ կամընտիր արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 1989թ. դեկտեմբերի 15-ին:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը շարունակել է ակտիվորեն համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության տարբեր ինստիտուտների, այդ թվում՝ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի և ՄԱԿ Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների հետ:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ մահապատժի վերացմանն ուղղված երկրորդ կամընտիր արձանագրությունը ստորագրելու և վավերացնելու արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կկատարի ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում ստանձնած հանձնառությունը:

Մահապատժի վերացմանն ուղղված երկրորդ կամընտիր արձանագրությունը բխում է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. սեպտեմբերի 23-ին) 6-րդ հոդվածի տրամաբանությունից և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի, ուստի Արձանագրության ստորագրումը և վավերացումը Հայաստանի Հանրապետության համար լրացուցիչ պարտավորություններ չի կարող առաջացնել:

Արձանագրության վավերացումը թույլ կտա էլ ավելի ամրապնդել Հայաստանի ու ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի ու ՄԱԿ մարդու իրավունքների պայմանագրային մարմինների, մասնավորապես՝ Մարդու իրավունքների կոմիտեի հետ փոխգործակցությունը՝ էլ ավելի բարձրացնելով մարդու իրավունքների ոլորտում ՀՀ միջազգային հեղինակությունը:

Վերջին շրջանում Արձանագրությանը միանալու հարցը բարձրացրել է նաև Եվրոպական միությունը՝ մարդու իրավունքների ոլորտում Հայաստան-Եվրոպական միություն երկխոսության 10-րդ հանդիպման ընթացքում, որի արդյունքներով ընդունվել է գործառնական եզրակացություն՝ Արձանագրության միանալու ուղղությամբ ներքին ընթացակարգեր սկսելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 1989 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝

մահապատժի վերացմանն ուղղված երկրորդ կամընտիր արձանագրության վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՀՀ արտաքին գործերի**
**նախարարի տեղակալ** **Արտակ Ապիտոնյան**